ԿԱՆԱՅՔ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅՆԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ (դիսկուրս)* «ՄԱՅՐԵՆԻՔ»

ՀՏԴ 94

Մնացականյան Լիլիթ

Պազմանի Պիտեր Կաթոլիկ Համալսարան, Հումանիտար և հասարակական գիտությունների ֆալուլտետ, Հայագիտության ամբիոն,
Բուդապեշտ, Հունգարիա
mnacakanyan_lilit99@mail.ru

Ազգայնականությունը հանդիսացել է հետխորհրդային հասարակությունների մեծ մասի շարժիչ ուժը, և Հայաստանը բացառություն չէ: Ավելին, հետխորհրդային համատեքստում ազգայնականության պատկերացումներն ավելի ակտիվացան Արցախյան հակամարտության վերելքի և դրան հաջորդած պատերազմական գործողությունների համատեքստում: Հետևաբար, դժվար է վերլուծել հետխորհրդային հայ հասարակությունը՝ առանց հաշվի առնելու դրա ընդգծված ազգայնական վերաբերմունքը: Պատմականորեն ազգայնականության հասկացությունը փոխկապակցված է եղել առնականության և հայրիշխանության գաղափարների հետ՝ այդպիսով նվազեցնելով նրա ֆեմինիստական ըմբռնումը: Հայրիշխանության և ռազմականացման գործընթացների համատեքստում հայ հասարակության մեջ կանանց դերը ստորադասվում է տղամարդկանց դերին, և կանանց դերը սահմանափակվում է ընտանիքում որպես հոգ տանողի կամ աջակից/օգնականի: Ներկայումս կարելի է նկատել իրավիճակի դրական փոփոխություն, քանի որ կա կանանց մասնակցության աճի միտում ինչպես քաղաքականության, այնպես էլ ռազմական ոլորտներում: Դրանք նպաստում են կանանց ներկայացվածությանը որոշումների կայացման ոլորտներում: Այնուամենայնիվ, խնդիրը մնում է կանանց՝ տղամարդկանց դերերին հավասար իրենց դերի ըմբռնումը: Այս հոդվածով փորձ է արվում համտեքստայնացնելու ֆեմինիստական մոտեցումը ազգայնական դիսկուրսի շրջանակներում: Այն քննարկում է կանանց դերերն ու գործառույթները ազգայնական նախագծերում, փորձում է վերլուծել փոխըմբռնման բացակայության պատճառները և քայլեր է առաջարկում ոլորտում հետագա զարգացման համար:

Բանալի բառեր. *ազգայնականություն, ֆեմինիզմ, պատերազմ, գենդեր, պետականաշինություն:*

Ազգայնականությունը հիմնականում պատկերացվում է տղամարդկային տեսանկյունից. հետևաբար, կանանց դերերը հաճախ սահմանափակվում են խորհրդանշական, բարոյական և կենսաբանական վերարտադրության միջոցով ազգայինի կերտման ջանքերին աջակցելով: Ազգայնական շարժումներում կա աշխատանքի հստակ

*Հոդվածը ներկայացվել է 23.03.2023:
Տպագրության է երաշխավորել Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանի պ.գ.դ. պրոֆեսոր Կ.Բալինտը 26.04.2023:
Հոդվածը տպագրության է ընդունվել 4.05.2023:

բաժանում, որտեղ կանայք ֆիզիկապես և խորհրդանշական կերպով վերարտադրում են ազգը, մինչդեռ տղամարդիկ պաշտպանում են այն:[1] Ազգայնական ինքնության դիսկուրսը հաճախ որակում է մայրը և մայրությունը որպես ազգի ավանդույթների և արժեքների ամրոց՝ կնոջ և ընտանիքի պատկերը դնելով ազգայինի պատկերացման և ինքնաընկալման հիմքում ու կանանց հարցը դարձնելով ավանդույթների, մշակութային իսկության և ազգային պատվի հոմանիշը.[2] Կանայք ազգային մշակույթի և ավանդույթների փոխանցողներն են երիտասարդ սերունդներին՝ թե՛ մոր, թե՛ ուսուցչի դերում, որն ավանդաբար ընկալվում է որպես կանացի աշխատանք: Ավելին, դրանք էթնիկ և ազգային սահմանների խորհրդանիշն են ազգի ներսում.[3] Նույնիսկ կենսաբանական վերաարտադրողների և մշակութային կամ գաղափարական փոխանցողների դերում կանայք ակտիվորեն արտահայտում են իրենց ազգային ինքնությունը: Այս դերի ընկալումը արտացոլվում է նաև ազգայնական և անկախությանն ուղղված շարժումներին իրենց ակտիվ մասնակցությամբ:

Հայաստանի դեպքում ազգայինն ու ազգայնականությունը լավագույնս դրսևորվում և ընկալվում է Արցախյան պատերազմների և հետպատերազմյան համատեքստերում: Կանայք ակտիվորեն ներգրավված են եղել Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի ազգային շարժումներում, ինչպես նաև կռվել են պատերազմում և ակտիվորեն աջակցել մարտիկներին՝ պատրաստվելու, հոգ տանելու և բուժօգնություն ցուցաբերելու գործում: Մասնակցելով ռազմական հակամարտությանը նրանք իրենց դրեցին այնպիսի մի համատեքստում, որը Հայաստանի դեպքում տարբերվում է սեռական խտրականությամբ՝ ի դեմս տղամարդկանց գերակշռության: Սա երբեմն սխալմամբ ընկալվում է որպես դիմադրություն հայ հայրապետական ազգայնական հայացքներին, այն է՝ կանանց՝ որպես մայրերի և խնամակալների: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ հակամարտության ընթացքում, առաջնագծում և հետկոնֆլիկտային համատեքստում կանայք իրենք իսկ հակված են վերարտադրելու այդ հայրիշխանական պատկերացումները՝ դրանց դիմակայելու փոխարեն:

Մայրությունը մարմնավորված է Հայաստանում կանանց ազգային և էթնիկ ինքնորոշման մեջ, և թեև մայրության կառուցումը պատմականորեն առկա է տարբեր ազգե-

---

[1]Enloe, Cynthia. *Bananas, Beaches, and Bases: Making Feminist Sense of International Politics*. [Բաներներ, ծովափեր և հիմքեր. Ֆեմինիստական ընկալում միջազգային քաղաքականության մեջ], 2nd ed., Berkeley, Los Angeles, London: University of California Press, 2014; Jayawardena, Kumari. *Feminism and Nationalism in the Third World*. [Ֆեմինիզմը և ազգայնականությունը երրորդ աշխարհում] London, 1986

[2]Sevan Beukian. *Motherhood as Armenianness: Expressions of Femininity in the Making of Armenian National Identity.* [Մայրությունը որպես հայկականություն. Կանացիության դրսևորումները հայ ազգային ինքնության ձևավորման մեջ], University of Alberta, 2014, 251.

[3]Abu-Laban, Yasmeen. "Keeping 'em Out: Gender, Race, and Class Biases in Canadian Immigration Policy." [Բացառելով նրանց. Գենդերային, ռասայական և դասակարգային կողմնակալությունները Կանադայի ներգաղթի քաղաքականության մեջ]. In *Painting the Maple: Essays on Race, Gender, and the Construction of Canada*. Ed. Veronica Strong-Boag, Sherrill Grace, Avigail Eisenberg, and Joan Anderson. Vancouver: University of British Columbia Press, 1998; Nagel, Joane. *Race, Ethnicity, and Sexuality: Intimate Intersections, Forbidden Frontiers*. [Ռասա, էթնիկ պատկանելություն և սեռականություն. անձնական խաչմերուկներ, արգելված սահմաններ], New York: Oxford University Press, 2003; Yuval-Davis, Nira. *Gender and Nation*. [Գենդեր և ազգ] London: Sage Publications, 1997.

որի ազգային դիսկուրսում, ինչպես պնդում է Բեկյանը, Հայաստանի դեպքում այն տարբեր է նրանով, որ մայրության հայեցակարգը զտված է ցեղասպանության պատմությամբ և ազգային պայքարի՝ մասնավորապես՝ Ադրբեջանի դեմ պատերազմի միջոցով, և այդ ընկալմամբ էլ պաշտպանվում է հայ կանանց կողմից:[1] Ըստ հետխորհրդային հայ հասարակության չափանիշների՝ հայ կնոջ կերտված իդեալական կերպարը իր ընտանիքի և իր ազգի համար զոհաբերող, հոգատար և սնուցող հայ մոր կերպարն է: Ազգի ներսում կնոջ խորհրդանշական դերը հատկանշում է նաև նրա՝ որպես էթնիկ/ազգային տարբերությունների կրող[2]: Կանայք ոչ միայն ուսուցանում և փոխանցում են էթնիկ և ազգային խմբերի մշակութային և գաղափարական ավանդույթները, այլև կազմում են նրանց իրական խորհրդանշական կերպարը: Կանանց միջազգային օրվա կապակցությամբ նախագահների և վարչապետների ելույթները շատ հաճախ արտացոլում են այս իրականությունը:

Ազգը՝ որպես «վտանգի տակ գտնվող սիրելի կին» կամ որպես «մարտի դաշտում իր որդիներին կորցրած մայր» ազգայնական դիսկուրսի սովորական մաս է ազգային-ազատագրական պայքարներում կամ հակամարտություններում, ինչպես օրինակ Արցախյան պատերազմներում, երբ տղամարդկանց կոչ են անում պայքարել հանուն կանանց ու երեխաների կամ պաշտպանել նրանց պատիվը: Կանայք ինքնըստինքյան դառնում են ազգի խորհրդանիշ: Ավելին, հաճախ մեկ էթնիկ խմբի և մյուսի միջև տարբերությունը հիմնականում դրվում է կանանց սեռական վարքագծի պատճառով: Օրինակ, «իսկական» հայ աղջիկը պետք է բարոյապես պատշաճ վարք դրսևորի,այլապես ո՛չ ինքը, ո՛չ իր երեխաները չեն կարող համարվել համայնքի մաս[3]: Կնոջ վարքագիծն ի վերջո դառնում է ոչ միայն իր սեփական, այլև ողջ ազգի ու պետության խորհրդանիշը: Բացի այդ, որպես ազգային խորհրդանիշ՝ բնորոշված «Մայր Հայաստան» և «Մայրենի լեզու» կաղապարներում, կանայք բարձրացվում են հիացմունքի և հարգանքի կարևոր պատվանդանի, որի միջոցով իդեալականացվում են մշակույթն ու ազգային ինքնությունը: Հարկ է նաև նշել, որ ավանդական հայ կնոջ՝ որպես հոգատար և խնամող մոր այս կերպարը պատմական բազմաթիվ դրվագներում համադրվել է հայ կնոջ կերպարի այլ դրսևորումների՝ քաջության և խիզախության հետ: Այդ զուգահեռները հատկապես լավ արտացոլված են ժողովրդական հեքիաթներում և պատմական դիպվածներում: Վառ օրինակներ են Ղազարոս Աղայանի ժողովրդական հեքիաթները, Մովսես Խորենացու անդրադարձը հայ կնոջ հզոր հայրենասեր անհատականությանը ի դեմս Տիգրանուհու, Սոսե Վարդանյանի կամ Սոսե Մայրիկի, Աննա Մայրիկի և այլոց կերպարները: Սոսե Մայրիկի և Աննա Մայրիկի երկու պատկերները՝ ինքնին վերագրելով որպես Մայրիկ, խոսում են ռազմական համատեքստում ավանդական դիսկուրսի առկայության մասին:

---

[1]Beukian, *Motherhood as Armenianness*, 2014, 249.

[2]Ըստ Նիրա և Ֆլոյա Անտիասների՝ սա չորրորդ դերն է, որ կանայք խաղում են ազգի ներսում, *տե՛ս*, Yuval-Davis, Nira, and Floya Anthias, *Woman-Nation-State*, [Կին, ազգ, պետություն], London, 1989, 7.

[3]Anthias, Floya, and Nira Yuvai-Davis. “Contextualizing Feminism- Gender, Ethnic and Class Divisions.” [Համատեքստայնացնելով Ֆեմինիզմը. գենդերային, էթնիկական և դասակարգային բաժանումներ], *Feminist Review*, no. 15, 1983, 62-76.

Հետխորհրդային հայ հասարակության մեջ իշխում էր ազգայնական նախագծում կնոջ դերի մասին ավանդական տեսակետը, իսկ կանայք ոչ թե հակադարձվում էին դրան, այլ ողջունում հանուն ազգի: Հետխորհրդային ինքնության ամրապնդման փորձերը Հայաստանում հիմնականում սկսվեցին 1988 թ.-ին, երբ հայկականությունն ավելի ընդգծվեց ու ամրապնդվեց[1]: Հայկականը պետք է եզակի լիներ՝ հիմնված ավանդական արժեքների վրա, որոնք կձևավորվեին որպես ոչ խորհրդային, հակաադրբեջանական և արևմտախույս: Նույնպես և պետք է լիներ կանայք՝ ավանդական արժեքների ջատագովներ և «հակաայլական»: Ինչպես նշում է Աղասի Թադևոսյանը, նահապետական հասարակության մեջ և՛ տղամարդիկ, և՛ կանայք ծառայում են հայրիշխանական արժեքների վերարտադրմանը: Եվ, քանի որ հետխորհրդային հայ հասարակությունը հիմնականում շարունակեց մնալ հայրիշխանական, կանանց մեծամասնությունը ծառայեց այդ համակարգին՝ բազմաթիվ ավանդույթներ համարելով որպես ինքնության մաս:[2] Այդ ինքնության վերահիմաստավորման գործում առաջատար դեր կարող են ունենալ միայն այն կանայք, ովքեր իրենք առաջադեմ են և հաղթահարել են հայրիշխանական ինքնության պատկերացումները: Կնոջ այս ավանդական կերպարը՝ որպես ավանդական ու հայրիշխանական արժեքների կրող ու պահապան, դիտվում է որպես զուտ հայկական:

Պատերազմի ժամանակ արդիականության ձգտման փոխարեն ավանդույթներին հավատարիմ մնալը կարևոր դեր է խաղացել հայ ինքնության ամրապնդման և ազգի՝ որպես մեկ, անբաժան միավորի համար:[3] Հարկավոր էր համայն հայության՝ թե՛տեղի, թե՛ սփյուռքահայության միասնության, և այս համատեքստում կորսվեցին կանանց վերաբերյալ և գենդերային քննարկումները: Կանայք շարժումներ չէին նախաձեռնում՝ պահանջելու գենդերային հատուկ իրավունքներ կամ փոփոխություններ, իսկ կանանց շարժման գաղափարը ընկալվում էր որպես հայերի համար խիստ պառակտիչ և հակասում էր կնոջ կանացի կերպարին: Իրենց սեփական շարժումները չկազմակերպելով և իրենց իրավունքները չպահանջելով՝ հայ կանայք փորձեցին կառուցել իրենց կանացիությունը և պահպանել «իդեալական կնոջ» կերպարը, որը պատրաստ է միշտ աջակցել տղամարդուն ազգի համար մղվող գոյապայքարում: Հասարակության մեջ հայկական կանացիությունն այսպես է պատկերված, և շատ կանայք հավանություն են տվել այդ գաղափարներին: Բացի այդ, ադրբեջանականը այլացնելու ուժեղ դիսկուրսը պահանջում էր նույնքան ուժեղ «մեր» դիսկուրսը, որն ընդգծում էր հայկականությունը որպես եզակի՝ դրանով իսկ արդարացնելով ավանդական արժեքների և սովորույթների նկատմամբ հարգանքը: Այս ավանդապաշտության մեջ կանանցից ակնկալվում էր, որ պետք է իրենց պահեն որոշակի ձևով՝ ամրապնդելով «իդեալական կնոջ» կերպարը՝ որպես մոդել, որին պետք է հետևել: Բայց կանանց կեպարի այսպիսի կառուցումը նաև ամրապնդեց տղամարդկանց որոշակի պատկեր.[4] տղամարդիկ ստեղծվել են որպես մարտիկներ, զինվորներ և քաջեր, ումից ակնկալվում էր հանուն ազգի զոհաբերել և հերոսացվել:

---

[1]Beukian, *Motherhood as Armenianness*, 253.
[2]Հեղինակային հարցազրույց Աղասի Թադևոսյանի հետ, 2022:
[3]Beukian, *Motherhood as Armenianness*, 254.
[4]Նույն տեղում:

Հասկանալու համար կանանց դերի ավանդական հասկացողության արտացոլանքը նաև ռազմական համատեքստում, անհրաժեշտ է դիտարկել մի քանի օրինակներ: Շուշիից Արցախյան առաջին պատերազմի մասնակից Եվգենյա Առուստամյանը հիշում է. «Տղամարդկանց ոգևորում էր մեր ներկայությունը: Շատ անգամ, երբ նեղվում էին կամ վախենում, մենք առաջինն էինք առաջ գնում: Նրանք դրանից և՛ քաջալերվում էին, և՛ ամաչում: Կանայք մի կողմից առաջ էին մղում, մյուս կողմից՝ զսպում նրանց»[1]: Այս առումով կանայք դիտվում էին որպես հայրենասեր, հայրիշխանական, ավանդական արժեքների կրող և, հետևաբար, լիովին համապատասխան ազգայնական դիսկուրսին: Պատերազմի մեջ նրանց՝ որպես ոգևորողի կամ զսպողի դերը զուգահեռ է ընտանիքում նրանց ավանդական դերին պատերազմի բացակայության դեպքում՝ որպես ընտանիքը միասին պահող և վեճերը հարթող: Բայց կանանց դերը պատերազմում չի սահմանափակվում միայն ոգևորելով կամ աջակցությամբ. այն հատեց հայրիշխանական համատեքստի սահմանները, ընդհուպ մինչև զինակիր ու ազատամարտիկ: Սակայն, ինչպես ստորև ցույց կտրվի, այս դեպքում և նկատելի էր ավանդական պատկերման անմիջական առկայությունը:

Հայ կանայք ակտիվորեն մասնակցել են Արցախյան առաջին պատերազմին՝ զենք վերցնելով և առաջնագծում տղամարդկանց հետ միասին կռվելով, վիրավորներին խնամելով, կամ տղամարդկանց բացակայության դեպքում ընտանիքի մասին հոգ տանելով: Թեև պատերազմում որպես մարտիկի/զինվորի դերը պատմականորեն պատկերացվում է որպես տղամարդու գործ, Արցախյան առաջին պատերազմի ժամանակ կանայք իրենց ինտեգրեցին այդ դերի շրջանակում: Կանայք, ովքեր հայտնվել են պատերազմական իրավիճակում ամենատարբեր դերերում, նույնպես անգնահատելի ներդրում են ունեցել՝ երբեմն համատեղելով ավանդական և նոր դերերը.[2] Այս իրադարձությունների հետևանքով այն ժամանակ Արցախի կանանց որդեգրած կյանքի ռազմավարություններից մեկը զինվորական կարիերան սկսելն էր: Հայաստանի Հանրապետության զինված ուժերի պաշտոնական վիճակագրության համաձայն՝ Արցախյան առաջին պատերազմին մասնակցել է 200 կին, որոնցից 42-ը զոհվել է մարտի դաշտում.[3] Նրանք առաջատար դիրքեր են զբաղեցրել գրոհի տակ գտնվող գյուղերում ինքնապաշտպանական ջոկատներ կազմավորելու գործում: Այդ ջոկատների կազմում եղել են մի շարք կանայք, որոնք հետագայում կռվել են առաջնագծում: 1992 թ.-ին՝ ռազմական գործողությունների ամենաթեժ պահին Վարդուհի Գևորգյանը արցախյան ռազմաճակատի իրադարձությունների թոհուբոհում էր.

1992 թվականի սեպտեմբերի 3-ին Կարենը սպանվեց Ղազանչիում: Կարենի հուղարկավորության ժամանակ երդվեցի, որ մինչև վերջ կլինեմ առաջնագծում… Գնացինք Կոմանդոսի մոտ (պատերազմի ժամանակ կամավորական միավորների պետն էր): Կոմանդոսը վեր կացավ՝ ծիծաղելով, ուրախ: Մենք նրան ասացինք, որ ցանկա-

---

[1]Հարցազրույց Society Without Violence-ի կողմից. *Կանայք, Անվտանգություն, Խաղաղություն. Պատերազմի Անտեսանելի Կողմը*, Երևան, 2017, 11.

[2]Shahnazaryan, Nona. “A Good Soldier and a Good Mother: New Conditions and New Roles in the Nagorno-Karabakh War.” [Լավ զինվոր և լավ մայր. նոր պայմաններ և ներ դերեր Արցախյան պատերազմում], In *Women in Arms: from the Russian Empire to Post-Soviet States*, Issue 17, 2016.

[3]Society Without Violence. *Կանայք, Անվտանգություն, Խաղաղություն. Պատերազմի Անտեսանելի Կողմը*, Երևան, 2017, 10.

նում ենք ստեղծել կանանց բրիգադ, և մենք պարզապես չգիտենք, թե ուր գնանք: Շատ կանայք կային, որոնց եղբայրներին սպանեցին, կամ ամուսիններին, կամ երեխային սպանեցին, բայց չգիտեին, թե ուր դիմեին:[1] [38:15-39:07]

Գևորգյանի պատմածից կարելի է ենթադրել, որ ջոկատ կազմելու և պատերազմին միանալու նրա որոշումը պայմանավորված է ամուսնու մահով: Նրա կայացրած որոշման վրա ազդել է հայրենակիցների հանդեպ սերն ու հիացմունքը, որը բնորոշ է «իդեալական հայուհու» կերպարին: Ավելին, ինչպես ինքն է նշում, կորուստ են ունեցել ոչ միայն ինքը, այլ շատ կանայք, և նա կարևորում է կորուստը որպես իրենց՝ այդպիսի որոշում ընդունելու խթան: Սա հանգեցնում է մի կարևոր խնդրի. արդյոք կանանց որոշումը կապված է ազգի հանդեպ նրանց հնազանդության, թե ավանդական դիսկուրսի համաձայն ազգը ձևավորող իրենց հայրերի, եղբայրների և ամուսինների հանդեպ ունեցած հնազանդության հետ: Կանանց՝ որպես մայր, քույր և կին բանակ մտնելու այս որոշումը վերարտադրում է վերոնշված ավանդական հայեցակարգը:

Իրենց դերի մասին հայրիշխանական պատկերացումների սահմանը հատելու կանանց փորձերը հանդիպել են բազմաթիվ մարտահրավերների: Տղամարդկանց գերակայություն ունեցող ոլորտում ներգրավված լինելը նշանակում էր ավանդաբար սահմանված արժեքների և հասկացությունների բախում: Նրանք ստիպված էին դիմակայել առկա կարծրատիպերին և հայրիշխանական մտածելակերպին: Ավելին, մարտահրավերներ ի հայտ եկան ինչպես այդպիսի ոլորտ մտնելու նախնական փորձերում, այնպես էլ դրա ընթացքում և դրանից հետո: Ինչպես պատմում է Շուշի քաղաքից պատերազմի մեկ այլ մասնակից Կարինե Դանիելյանը, զինվորականների ղեկավար կազմը չէր ուզում, որ նրանք մտնեն ռազմական գործի և մասնավորապես պատերազմի մեջ.

Հետո կամաց-կամաց մտա բանակ: Գնացի նրա մոտ, իսկ նա ասաց. «Քույրիկ, գնա երեխա ունեցիր: Մենք կկռվենք»: Ես ասացի՝ «Ով ուզում է երեխա ունենալ, թող ունենա, ես չեմ ուզում»: Ինձ մերժեցին, ասացին, որ դա տղամարդու գործ է: …. Գնացի պետի մոտ, ասացի, որ ուզում եմ բանակ գնալ: Նա ասաց. «Դա կնոջ գործը չէ»: Ասացի՝ գիտեմ, բայց ես ուզում եմ միանալ, ես ուզում եմ մարզվել.[2] [26:30-27:16]

Մինչ բանակ մտնելը կամ պատերազմում ներգրավվելը կանանց հիշեցնում են իրենց ավանդական դերերի մասին, այս դեպքում՝ որպես ազգի վերարտադրող, որ կարող է դիտարկվել որպես նախազգուշացում: Սակայն արդեն մտնելով ոլորտ՝ կանանց համար մեկ այլ մարտահրավեր է առաջ գալիս՝ այն վերաբերմունքը, որ նրանք երբեմն ստանում են տղամարդկանց կողմից: Տղամարդկանց գերակշռող միջավայրում գտնվելը տեղի է տալիս կանանց նկատմամբ կարծրատիպային վարքագծին: Նրանց նայում են «տարօրինակ աչքով»՝ որպես մեկին, ում նման պահվածքը և հիմնականում այդպիսի համատեքստում գտնվելը չի համապատասխանում իդեալական հայ կնոջ չափանիշներին: Սա կարևոր գործոն է, քանի որ Շահնազարյանի նշմամբ՝ պատերազմում առանցքային մարտահրավերներից մեկը և թերևս ամենակարևորը

---

[1]Վարդուհի Գևորգյան, The De Collective. *Անվավերագիր [Recordless]*, փաստագրական ֆիլմ, մոնտաժը Լուսինե Չերգեշտյանի, Հայաստան, Երևան, The Club, 2016.

[2]Կարինե Դանիելյան, The De Collective. *Անվավերագիր [Recordless]*, փաստագրական ֆիլմ, մոնտաժը Լուսինե Չերգեշտյանի, Հայաստան, Երևան, The Club, 2016.

զինվորների բարոյականության պահպանումն է:[1] Կանայք նույնպես զինվորներ են, և նրանց բարոյականության վրա վատ ազդեցությունը կարող է նույնքան վատ անդրադառնել հակամարտության ելքի վրա:

Արցախյան պատերազմներում կանանց ունեցած վճռորոշ դերերից մեկը զինվորներին ցուցաբերած բժշկական օգնությունն էր: Կանանց մեծ մասը մարտի դաշտում էին որպես բուժքույր, և բուժքույրերի փորձը տարբերվում էր կռվելու փորձից: Հավասարապես լինելով առաջնագծում այլ կանանց հետ՝ նրանք չէին քննադատվում այնտեղ գտնվելու համար: Սա կարելի հետևյալ կերպ մեկնաբանել. բուժքույր լինել նշանակում է օգնել, հոգ տանել, ինչը կնոջ ավանդական դերն է ընտանիքում, և որը նաև արտացոլվում է մարտի դաշտում: Մինչդեռ կանանց՝ մարտական դերում տղամարդկանց հետ նույն մակարդակի վրա լինելը տղամարդկանց կողմից ընկալվում է որպես սահմանների հատում: Ավելին, դա այդպես է ընկալվում նաև հենց կանանց կողմից. իրենց համարելով տղամարդկանց հետ հավասար պայքարող, նրանց վահան, զոհված եղբայրների և որդիների համար վրեժ լուծող, կանայք պատկերվում են ոչ թե որպես ազգի պաշտպան, այլ ազգի պաշտպանների պաշտպան: Նրանք իրենք են վերարտադրում գոյություն ունեցող հայրիշխանական ու ավանդական ըմբռնումները, ավելին, հենց իրենք իրենց թույլ չեն տալիս հատել այդ ըմբռնման սահմանները, ինչը հատկապես լավ արտացոլված է առաջնագծից ներս՝ ներհասարակային շրջանակում:

Մինչ որոշ կանայք առաջնագծում էին որպես մարտիկներ և բուժքույրեր, մեծամասնությունը ընտանիքների հետ էր՝ խնամելով երեխաներին և ծերերին և փորձելով ամուր պահել ընտանիքները: Այդպիսի ծանր շրջանում կարևոր էր հասարակության կազմակերպվածությունն ապահովելը: Կանայք այսպիսով բախվեցին նոր մարտահրավերների՝ ստիպված լինելով լիարժեք աշխատել երեխաներին կերակրելու համար: Այդ տարիներին նրանք պետք է կերակրեին իրենց ընտանիքներին այն ամենով, ինչ կարող էին գտնել: Արցախյան առաջին պատերազմի տարիները աչքի էին ընկնում թույլ և գրեթե կործանված տնտեսությամբ: 1988 թվականի դեկտեմբերի Գյումրիի երկրաշարժը, էներգետիկ ճգնաժամը, Հայաստանի տնտեսական և հողային շրջափակումը Թուրքիայի և Ադրբեջանի կողմից և խորհրդային ընդհանուր շուկայի ու դրա տնտեսական կառուցվածքի փլուզումը տրավմատիկ էին հայերի համար և նրանք ստիպված էին հարմարվել այդ պայմաններին: Գործազրկության մակարդակը չափազանց բարձր էր,[2] և սա այն ժամանակաշրջանն էր, երբ տղամարդիկ ստիպված էին գաղթել այլուր աշխատանք գտնելու համար, իսկ կանայք պետք է կրեին տունը կերակրողի և տնային տնտեսությունը վարողի կրկնակի բեռը: Նման պայմաններում մեկ ընտանիքի կանանց տարբեր սերունդներ հաճախ օգնում էին միմյանց պահպանել իրենց ընտանիքը: Բացի այդ, ազգակցական կապերը հայերի համար դարձան սննդի և առօրյա

---

[1]Shahnazaryan, *A Good Soldier and a Good Mother*, 19.

[2]ՅՈՒՆԻՍԵՖ-ի տվյալներով՝ մինչև 1993 թվականը մոտ մեկ միլիոն մարդ կա՛մ պաշտոնապես գործազուրկ էր, կա՛մ ստիպված էր հեռանալ, *տե՛ս* Scott, W. ‘Emergency and Beyond: A Situation Analysis of Children and Women in Armenia’. [Արտակարգ իրավիճակներ և դրանից դուրս. երեխաների և կանանց իրավիճակի վերլուծություն Հայաստանում], Geneva: UNICEF, 1994, մեջբերված Dudwick, Nora. “Out of the Kitchen into the Crossfire: Women in Independent Armenia.” [Խոհանոցից դուրս՝ դեպի կրակի մեջ. կանայք անկախ Հայաստանում], In *Post-Soviet Women: From the Baltic to Central Asia*. Ed. by Mary Buckley, Cambridge: Cambridge University Press, 1997, 237.

կյանքի այլ հիմնական ապրանքների պակասը սուբսիդավորելու կարևորագույն միջոցներից մեկը:[1] Նրանք պետք է ստանձնեին այն դերերը, որոնք ավանդապես տղամարդը ուներ ընտանիքում, ուստի նրանք բախվեցին այնպիսի մարտահրավերների, որոնց մշակութային առումով պատրաստ չէին: Նրանց պատրաստակամությունը աշխատելու նույնիսկ առանց համապատասխան կրթական մակարդակի խոսում է նրանց՝ նոր ասպարեզ մուտք գործելու մասին, որը մասամբ էլ տղամարդկային էր, քանի որ ընտանիքը ֆինանսապես կայուն պահողները տղամարդիկ էին: Թեև սոցիալիզմի ժամանակ շատ կանայք են աշխատել, շատերը հարել են այն տեսակետին, որ կանանցից ակնկալվում է հոգ տանել տան և ընտանիքի մասին՝ լինելով բնական խնամող՝ որպես իրենց վերարտադրողական դերի արդյունք.[2] բիզնես դնելը կամ աշխատելը տղամարդու գործն էր: Այնուամենայնիվ, այդ ծանր տնտեսական պայմաններում կանայք, ովքեր առանց իրենց ամուսինների էին, ստիպված էին ընտանիքը պահելու այլընտրանքային ուղիներ փնտրել և դիմել բիզնես վարելու: Սա կանանց հնարավորություն տվեց դուրս գալ ավանդական «տանը մնալու» դերից և ոտք դնել մի հողի վրա, որը պիտակավորված էր որպես տղամարդկանցը:

Ճիշտ է, վերոհիշյալ մարտահրավերները քիչ թե շատ նվազեցին 2020 թ.-ի *պատերազմում, երբ տնտեսական պայմանները համեմատաբար բարենպաստ էին, ինչը թույլ էր տալիս կանանց ինտեգրվել ավելի կազմակերպչական, վարչական և նյութատեխնիկական հարցերում, ինչպես առաջնագծում զինվորների համար սննդի փաթեթների պատրաստման, այնպես էլ ընտանիքի հոգսերը հոգալու համար: Դա չի նշանակում, որ վերջին պատերազմում կանայք դուրս են մնացել զինվորական ծառայությունից, սակայն նրանց աշխատանքը ռազմական ոլորտում ևս մեծամասամբ եղել է կազմակերպչավարչական. նրանք մնում էին համապատասխան զորամասերում, կատարում գրանցումներ, փոխանցում տեղեկություններ: Kooyrigs Armenia-ի հայաստանյան տնօրեն և Հայաստանի ամերիկյան համալսարանի պրոֆեսոր Մարիամ Ավագյանը նշում է, որ 44-օրյա պատերազմի ժամանակ առաջնագծից դուրս ամեն ինչ մնացել էր կանանց ուսերին, նրանք ինքնուրույն են վարում հասարակությունը. «….շատ անգամ շրջապատումս տղամարդկանց չէի տեսնում: Մենք աշխատում էինք տարբեր ՀԿ-ների հետ մարդասիրական աշխատանք կատարելու համար, և մեծամասամբ նրանք կանայք էին. հասարակությունը ղեկավարում էին կանայք… Կառավարությունն իր գործն էր անում, և ահա այնտեղ էինք մենք, և մենք պետք է շատ արագ կազմակերպվեինք, օգնություն ցուցաբերեինք, գործերը հասցնեինք, և իմ փորձից ելնելով ամենուր կանայք էին»[3]: Ավագյանի փորձը ցույց է տալիս, որ գրեթե երեսուն տարի ոչ պատերազմոչ խաղաղության իրավիճակում գտնվելը կանանց հնարավորություն է ընձեռել զգալի փոփոխությունների ենթարկվել իրենց կրթության և համակարգման կարողությունների*

---

[1]Beukian, *Motherhood as Armenianness,* 255.

[2]Nona Shahnazarian & Ulrike Ziemer, *Emotions, loss and change: Armenian women and post-socialist transformations in Nagorny Karabakh*, [Զգացմունքներ, կորուստ և փոփոխություն. հայ կանայք և հետսոցիալիստական վերափոխումները Լեռնային Ղարաբաղում], Caucasus Survey, 2014, 34.

[3]Mariam Avagyan, *The Gendered Face of The Nagorno Karabakh Conflict*. [Լեռնային Ղարաբաղի հակամարտության գենդերային երեսը], Caucasus Edition, Journal of Conflict Transformation. Միլենա Աբրահամյանի, Մարիամ Ավագյանի, Համիդա Գիյասբայլիի և Վահիդ Ալիևի մասնակցությամբ, Մարտ, 2021.

մեջ: Բայց ավելի կարևոր է, որ տնտեսական պայմանները մեծ դեր խաղացին մարտահրավերներին արագ արձագանքելու կանանց կարողության մեջ: Այնուամենայնիվ, դժվար է նկատել մտածելակերպի զգալի փոփոխություն և կրկին՝ գոյապայքարի համատեքստում նրանք նախընտրեցին չընդվզել և հավատարիմ մնալ տիրող կարգերին: Բացի այդ, նրանք չէին արժեզրկում ամուսնու դերը՝ որպես ընտանիքի գլուխ, և չէին ուզում նաև կասկածի տակ դնել այն: Ավելին, կանայք միշտ պահում էին տղամարդու տեղը որպես ընտանիքի գլուխ և պնդում էին երեխաների լիարժեք հարգանքը իրենց հոր նկատմամբ՝ որպես ընտանիքի ղեկավար: «Հայ կանայք պետք է մտնեն Գինեսի գրքի մեջ այդ տարիներին կատարած արարքների համար, ընտանիքի ամուր սյունը լինելու, իրենց ամուսինների հուզական հպարտությունը որպես զինվոր և տղամարդ պահպանելու համար, որպեսզի նրանք չընկնեն հուսահատության և հիասթափության մեջ… [Կինը] ցանկանում էր լինել իր ամուսնու հոգևոր աջակցությունը»[1]: Սա վկայում է այն մասին, որ կանայք իրենց հոգե-հուզական աջակցության միջոցով փորձում էին պահպանել տղամարդու դիրքը որպես ընտանիքում գերիշխողի և թույլ չէին տալիս իրենց դուրս գալ իրենց ավանդաբար սահմանված տարածքներից: Այսպիսի վարվելակերպը կշարունակվի նաև հետկոնֆլիկտային հասարակության մեջ, որը բնութագրվում է հսկայական հուզական ալիքով: Նման հասարակությունում կանանց դերը կենտրոնացած էր ոչ միայն իրենց ընտանիքների մասին հոգ տանելու և երեխաներին կրթելու վրա, այլև մի նոր՝ հոգեբանական դերի վրա, ովքեր պետք է օգնեին իրենց ամուսիններին պատերազմից հետո առօրյայի անցնելուն: Արցախի մշակույթի և երիտասարդության հարցերի նախարար Նարինե Աղաբալյանը Բեուկյանին տված հարցազրույցում երկու կարևոր խնդիր է արտահայտել՝ հասարակությունների հետպատերազմյան վերականգնման և ադապտացիայի հետ կապված:

«Տղամարդիկ պատերազմից հետո դժվարությամբ էին հարմարվում խաղաղությանը: Վերաադապտացիան դժվար էր, նրանց բարոյականությունը փոխվել էր (ոմանք իրենց գրկում կորցրել էին ընկերներին): Նրանց հոգեբանական կարգավիճակը պետք էր բարձրացնել, և դա մեծ ջանքեր էր պահանջում: Այդ ջանքերն իրենց վրա են վերցրել կանայք, ովքեր այդ գործում կարևոր դեր են ունեցել: Հայաստանի դպրոցներում, կարծես թե, դաստիարակները կանայք են: Եվ դա որոշակի դեր է տալիս կանանց, կարծես տղամարդիկ կարող են ավելի ֆիզիկական և պաշտպանիչ դեր ստանձնել, իսկ կանայք կարող են ավելի շատ հոգ տանել՝ սովորեցնելով երեխաներին, մեծացնելով նրանց»[2]:

Ամուսիններին և եղբայրներին հոգեպես աջակցելը և օգնելով նրանց հետկոնֆլիկտային տրավման հաղթահարել ևս մեկ անգամ ընդգծում է խնամողների դերը և նշում նրանց նվիրվածությունը տղամարդկանց: Նրանց աջակցող դերը ցույց է տալիս, որ միայն ամուսիններին, եղբայրներին և հայրերին պետք է աջակցող վերաբերմունք ցուցաբերվի, իսկ իրենց փորձը տղամարդկանց փորձառության կողքին պակաս կարևոր է դիտարկվում: Այս հոգեբանական օգնության միջոցով կանայք փորձում են հերոսացնել տղամարդկանց: Նրանք երկրորդայնացնում են սեփական փորձը և հերթական անգամ

[1]Հարցազրույց Սևան Բեուկյանի կողմից Արմենուհի Ստեփանյանի հետ, մերբերված է Beukian, *Motherhood as Armenianness*, 255.
[2]Նարինե Աղաբալյան, Beukian, Motherhood as Armenianness, 258.

զոհաբերում իրենց: Կնոջ հերոսացումը դրսևորվում է միայն ազգի համար իրենց տղամարդ բարեկամին զոհաբերելով՝ ամրապնդելով այն գաղափարը, որ կանանց հարաբերությունը ազգի և պետականաշինության հետ հնարավոր է դառնում տղամարդու միջնորդությամբ:

Պատերազմի ամենադաժան արդյունքներից մեկը հարազատի կամ ընկերոջ կորուստն է, որը կարելի է ընկալել որպես ռազմականացված դիսկուրսի մի մաս՝ ի դեմս զինվորի՝ որպես ազգային հերոս: Տղամարդիկ, ովքեր զոհվում են մարտում, հրապարակայնորեն նշվում են որպես նահատակներ և հերոսներ, մինչդեռ նրանց մահը սգում են ոչ հրապարակայնորեն՝ գաղտնի: Կանայք, հատկապես մայրերը, մեծարվում են իրենց որդիների, եղբայրների, հայրերի կամ ամուսինների հայրենանվեր զոհաբերության համար, այն իմաստով, որ նրանք իրենց կյանքը նվիրել են հայրենիքին, սակայն կնոջ այս փառաբանումը միշտ կապված է իրենց կորցրած տղամարդկանց հետ: Այն խթանում է մայրերի սուրբ զոհաբերության գաղափարը՝ զուգորդված հայրենասիրական արժեքներով և այն համոզմունքով, որ կնոջ հիմնական նպատակը հայրենիքի համար ավելի շատ որդի ծնելն է: Գովասանքի և հարգանքի հանրային ծեսերը շատ քիչ տեղ են թողնում անձնական սգի համար՝ առանձնացված զոհաբերության պատմությունից: Նմանապես, սգավոր կանայք չեն կարողանում հրապարակայնորեն դատապարտել զինվորական հաստատությունը, որը զրկել է իրենց սիրելիներից: «Կան ընտանիքներ, որոնք ասում են, որ հպարտանում են այն փաստով, որ իրենց հարազատներին կորցրել են իրենց երկրի համար մղվող պայքարում: Սակայն, երբ մենք զրուցում ենք նրանց հետ առանձին, ի հայտ են գալիս նրանց իրական զգացմունքները, ծայրահեղ բացասական վերաբերմունքը կորստի և ցավի նկատմամբ:»[1] Կորուստի այսպիսի գենդերային հիերարխիան հանգեցնում է նրան, որ կանայք իրենց կորստի արտացոլման մեջ և տղամարդ հարազատին կորցնելու սոցիալական, իրավական և էմոցիոնալ հետևանքներում առաջնահերթություն են տալիս տղամարդկանց: Այս կորստի նկատմամբ կանանց հասարակական վերաբերմունքը ազգային դիսկուրսի մեջ կնոջ խորհրդանշական դերի ցուցիչն է: Այն ամրապնդում է այն գաղափարը, որ իդեալական հայ կինը պետք է պատրաստ լինի իր որդուն/ամուսնուն զոհաբերել հայրենիքի համար: Սա, թերևս, կանանց ներկայացվածության ամենաուժեղ դրսեւորումն է ազգայնականության զարգացման գործում:

Փնտրելով այս դրսևորման փոփոխությունը, կանայք փորձում են ավելի ինտեգրվել այն ոլորտներում, որտեղ ազգայնականությունը լավագույնս է դրսևորված: Մեր օրերում Հայաստանում կանայք ցանկություն են հայտնում ծառայել բանակում:[2] Աթանեսյանը նշում է, որ հայկական ռազմաբազաների ենթակառուցվածքը նախատեսված է հիմնականում տղամարդկանց համար, սակայն ներկայիս ռազմական բարեփոխումները Հայաստանում կախված են կանանց ակտիվ հավաքագրումից և նրանց հայրենասիրական ցանկություններից՝ տղամարդկանց կողքին հավասարապես բանակում

---

[1]Հարցազրույց The Kvinna till Kvinna Foundation-ի կողմից, մեջբերված է Kvinna till Kvinna Foundation. *Listen to Her: Gendered Effects of the Conflict over Nagorno-Karabakh and Women's Priorities for Peace*. [Լսեք նրան. Լեռնային Ղարաբաղի շուրջ հակամարտության գենդերային ազդեցությունը և կանանց առաջնահերթությունները հանուն խաղաղության], ed. by Twum, Jonelle, Tbilisi, Georgia, 2019, 29.

[2]Հեղինակային հարցազրույց Աղասի Թադևոսյանի հետ, 2022:

մասնակցելու համար:[1] Բացի այդ, Աղասի Թադևոսյանի համոզմամբ, ներկայումս Հայաստանում կանայք և աղջիկները ավելի շատ են աշխատում իրենց վրա և առաջ են ընթանում իրենց կրթական հմտություններով, հետևաբար, միտում կա, որ աղջիկներն ու կանայք կինտեգրվեն Հայաստանի ռազմական արդյունաբերության և պատերազմի ժամանակ տեխնոլոգիական կառավարման ոլորտում[2]: Քանի որ ազգայնականությունն ու ռազմականությունը փոխկապակցված են, ռազմական ուժը համարվում է ազգային պետականության կառուցման անբաժանելի մասը: Այսպիսով, կան կանայք, ովքեր ցանկանում են միանալ բանակին՝ որպես տղամարդկանց կողքին ազգի կառուցմանը մասնակցելու միջոց: Սակայն ռազմական ոլորտում կամ բանակում ինտեգրված կանանց փորձը չի ենթադրում, որ դա տեղի ունենա: Կան մի շարք պոտենցիալ մարտահրավերներ, որոնց կանայք կարող են հանդիպել բանակում հավաքագրվելու և ծառայելու ընթացքում, ներառյալ սոցիալ-հոգեբանական ադապտացումը զինվորական հարաբերություններին, ծառայությանը և ենթակառուցվածքին, ինչպես նաև ռազմական կոլեկտիվներում ղեկավարության հետ կապված խնդիրներին: Վերջինս հատկապես կարևոր է, քանի որ ավելի բարձր պաշտոններ զբաղեցնելը ենթադրում է կանանց հրամաններ տալու կարողություն, որը լի է սոցիալական նախապաշարմունքներով և կարծրատիպերով: Աթանեսյանի պնդմամբ՝ այս իրավիճակում ենթադրվում է, որ հրաման տվողը պետք է լինի ֆիզիկապես և հոգեպես ավելի ուժեղը, ի հեճուկս ստացողի և այդ հրամանները կատարողի.[3] Ըստ այդմ, երբ տղամարդիկ և կանայք միասին աշխատում են բանակում, հրաման տվողը ավանդաբար պետք է լինի տղամարդը, իսկ ավելի թույլը կամ կատարողը՝ կինը. «...Կան պաշտոններ, որոնք դեռ կանայք չեն կարող զբաղեցնել: Դրանք հրամանատարական պաշտոններ են: Այս հարցը կապված է մեր մտածելակերպի հետ: Հաղթահարելու դեռ շատ կարծրատիպեր կան և կին հրամանատարին հավասարապես ընկալելու համար շատ ժամանակ կպահանջվի».[4]

Մեծ է եղել կանանց դերը ազգայնականության ձևավորման և ամրապնդման գործում, սակայն այդ դերերը պետք է վերաձևակերպվեն և հասկացվեն ըստ արժանվույն: Եթե վերոնշյալ նախապաշարմունքներն ու կարծրատիպերը շարունակեն շրջանառվել, ո՛չ կանանց ինտեգրման մակարդակի բարձրացումը բանակում, ո՛չ էլ նրանց ներդրումը երկրի ռազմական զարգացման գործում չեն կարողանա վերաիմաստավորել նրանց դերը և հակասել ազգի և ազգայնականության մեջ լայնորեն ընդունված խորհրդանշականին: Փոփոխությունը պետք է տեղի ունենա ոչ թե ինստիտուցիոնալ մակարդակներում, այլ նախ և առաջ մտածելակերպի մեջ՝ և՛ կանանց, և՛ տղամարդ-

---

[1]Արթուր Աթանեսյան. «Կանայք ՀՀ զինված ուժերում. ինքնընկալումը, ներգրավման և հարմարման բարելավման խնդիրները». *Գենդերային հիմնախնդիրները ժամանակակից Հայաստանում. Հետազոտությունից դեպի քաղաքականություն,* գլխ. խմբագիր՝ Գոհար Շահնազարյան, Երևան, ԵՊՀ հրատ., 2016, 131:

[2]Հեղինակային հարցազրույց, 2022:

[3]Աթանեսյան, «Կանայք ՀՀ զինված ուժերում. ինքնընկալումը, ներգրավման և հարմարման բարելավման խնդիրները». *Գենդերային հիմնախնդիրները ժամանակակից Հայաստանում. Հետազոտությունից դեպի քաղաքականություն,* գլխ. խմբագիր՝ Գոհար Շահնազարյան, Երևան, ԵՊՀ հրատ., 2016. էջ 131:

[4]Հարցազրույց Արթուր Աթանեսյանի կողմից, մեջբերված է. Գոհար Շահնազարյան. «Գենդերային հիմնախնդիրները ժամանակակից Հայաստանում. Հետազոտությունից դեպի քաղաքականություն», Երևան, ԵՊՀ հրատ., 2016, 144-145:

կանց: Այս ոլորտներում ինտեգրման մեծացմանը զուգընթաց նրանց դերի ըմբռնումը պետք է ստանա նաև այլ ձևեր՝ զատ ավանդաբար ենթադրվող ենթականերից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Արթուր Աթանեսյան, «Կանայք ՀՀ զինված ուժերում. ինքնընկալումը, ներգրավման և հարմարման բարելավման խնդիրները». *Գենդերային հիմնախնդիրները ժամանակակից Հայաստանում. Հետազոտությունից դեպի քաղաքականություն,* գլխ. խմբագիր՝ Գոհար Շահնազարյան, Երևան, ԵՊՀ հրատ., 2016.
2. Abu-Laban, Yasmeen. “Keeping ’em Out: Gender, Race, and Class Biases in Canadian Immigration Policy.” [Բացառելով նրանց. Գենդերային, ռասայական և դասակարգային կողմնակալությունները Կանադայի ներգաղթի քաղաքականության մեջ]. In *Painting the Maple: Essays on Race, Gender, and the Construction of Canada*. Ed. Veronica Strong-Boag, Sherrill Grace, Avigail Eisenberg, and Joan Anderson. Vancouver: University of British Columbia Press, 1998.
3. Anthias, Floya, and Nira Yuvai-Davis. “Contextualizing Feminism- Gender, Ethnic and Class Divisions.” [Համատեքստայնացնելով Ֆեմինիզմը. գենդերային, էթնիկական և դասակարգային բաժանումներ], *Feminist Review*, no. 15, 1983.
4. Dudwick, Nora. “Out of the Kitchen into the Crossfire: Women in Independent Armenia.” [Խոհանոցից դուրս՝ դեպի կրակի մեջ. կանայք անկախ Հայաստանում], In *Post-Soviet Women: From the Baltic to Central Asia*. Ed. by Mary Buckley, Cambridge: Cambridge University Press, 1997.
5. Enloe, Cynthia. *Bananas, Beaches, and Bases: Making Feminist Sense of International Politics*. [Բաններ, ծովափեր և հիմքեր. Ֆեմինիստական ընկալում միջազգային քաղաքականության մեջ], 2nd ed., Berkeley, Los Angeles, London: University of California Press, 2014.
6. Jayawardena, Kumari. *Feminism and Nationalism in the Third World*. [Ֆեմինիզմը և ազգայնականությունը երրորդ աշխարհում] London, 1986.
7. Kvinna till Kvinna Foundation. *Listen to Her: Gendered Effects of the Conflict over Nagorno-Karabakh and Women’s Priorities for Peace*. [Լսեք նրան. Լեռնային Ղարաբաղի շուրջ հակամարտության գենդերային ազդեցությունը և կանանց առաջնահերթությունները հանուն խաղաղության], ed. by Twum, Jonelle, Tbilisi, Georgia, 2019.
8. Nagel, Joane. *Race, Ethnicity, and Sexuality: Intimate Intersections, Forbidden Frontiers*. [Ռասա, էթնիկ պատկանելություն և սեռականություն. անձնական խաչմերուկներ, արգելված սահմաններ], New York: Oxford University Press, 2003.
9. Nona Shahnazarian & Ulrike Ziemer, *Emotions, loss and change: Armenian women and post-socialist transformations in Nagorny Karabakh*, [Զգացմունքներ, կորուստ և փոփոխություն. հայ կանայք և հետսոցիալիստական վերափոխումները Լեռնային Ղարաբաղում], Caucasus Survey, 2014.
10. Sevan Beukian. *Motherhood as Armenianness: Expressions of Femininity in the Making of Armenian National Identity.* [Մայրությունը որպես հայկականություն. Կանացիության դրսևորումները հայ ազգային ինքնության ձևավորման մեջ], University of Alberta, 2014.

11. Shahnazaryan, Nona. “A Good Soldier and a Good Mother: New Conditions and New Roles in the Nagorno-Karabakh War.” [Լավ զինվոր և լավ մայր. նոր պայմաններ և ներ դերեր Արցախյան պատերազմում], In *Women in Arms: from the Russian Empire to Post-Soviet States*, Issue 17, 2016.
12. Society Without Violence. *Կանայք, Անվտանգություն, Խաղաղություն. Պատերազմի Անտեսանելի Կողմը*, Երևան, 2017.
13. The De Collective. Անվավերագիր *[Recordless]*, փաստագրական ֆիլմ, մոնտաժը Լուսինե Չերգեշտյանի, Հայաստան, Երևան, The Club, 2016.
14. *The Gendered Face of The Nagorno Karabakh Conflict*. [Լեռնային Ղարաբաղի հակամարտության գենդերային երեսը], Caucasus Edition, Journal of Conflict Transformation. Միլենա Աբրահամյանի, Մարիամ Ավագյանի, Համիդա Գիյասբայլիի և Վահիդ Ալիևի մասնակցությամբ, Մարտ, 2021.
15. Yuval-Davis, Nira, and Floya Anthias, *Woman-Nation-State*, [Կին, ազգ, պետություն], London, 1989.
16. Yuval-Davis, Nira. *Gender and Nation*. [Գենդեր և ազգ] London: Sage Publications, 1997.

РЕЗЮМЕ

ЖЕНЩИНЫ В НАЦИОНАЛИСТИЧЕСКОЙ РЕЧИ ПОСТСОВЕТСКОЙ АРМЕНИИ (ДИСКУРС) "РОДИНА МАТЬ"

Мнацаканян Лилит

Католический Университет имени Пазманя Петра, Факультет Гуманитарных и Социальных Наук, Кафедра Арменоведения

Будапешт, Венгрия

Национализм был движущей силой большинства постсоветских обществ, и Армянское общество не исключение. Более того, в постсоветской Армении изменились представления о национализме в свете обострения нагорно-карабахского конфликта и последовавших за ним военных действий. Поэтому сложно анализировать постсоветское армянское общество без учета его сильных националистических нарративов и настроений. Исторически понятие национализма ассоциировалась с идеями мужественности и патриархата, тем самым уменьшая его феминистские измерения. В условиях патриархата и процессов милитаризации армянское общество стало более мужским, а роль женщины ограничивалась ролью воспитательницы и помощницы в семье. В настоящее время ситуация меняется к лучшему, так как наблюдается тенденция увеличения участия женщин как в политике, так и в военной сфере. Это способствует расширению представительства женщин в сферах принятия решений. Тем не менее, остается проблема осознания ими своей роли наравне с мужчинами. Эта статья является одной из таких попыток контекстуализировать феминистский подход в рамках националистического дискурса. Автором обсуждаются роль и функции женщин в националистических проектах, чтобы проанализировать причины непонимания и даются рекомендации для дальнейшего развития в этой области.

***Ключевые слова**:* национализм, феминизм, война, гендер, образование государства

SUMMARY

WOMEN IN THE NATIONALIST SPEECH OF POST-SOVIET ARMENIA (DISCOURSE) "MOTHER TONGUE"

Mnatsakanyan Lilit

Pazmany Peter Catholic University, Faculty of Humanities and Social Sciences,
Armenian Studies Department
Budapest, Hungary

Nationalism has been the driving force of most of the post-Soviet societies, and Armenia is no exception. Moreover, in post-Soviet context the notions of nationalism were intensified in the light of the rise of Nagorno-Karabakh conflict and the war actions following it. Therefore, it is hard to analyze the post-Soviet Armenian society without taking into consideration its strong nationalist narratives and attitudes. Historically the notion of nationalism has been correlated with the ideas of masculinity and patriarchy, thus decreasing its feminist dimensions. In the context of patriarchy and militarization processes, Armenian society became more male dominated, and women's role were limited to those of in family as caretakers and supporters. Currently the situation is towards positive change as there is a tendency of increase in women's participation in both politics and military spheres. These promotes women's representation in decision-making spheres. Yet, the problem remains of the comprehension of their role as equal to men. This article is one such attempt to contextualize feminist approach in the framework of nationalist discourse. It discusses women's roles and functions in nationalist projects, attempts to analyze the reasons for the lack of comprehension and draws recommendations for further development in the field.

***Keywords**:* nationalism, feminism, war, gender, state building.